Ռահվիրաները ողջ աշխարհում

Ամերիկյան Սամոա

«Աստված ասաց այո»

Լեվա այա Լեվաոն ծանր առողջական խնդիրներ ուներ: 2015 թվականին նրա աչքերի վրա թարախոտ չիբաններ էին առաջացել: Չիբանները բուժվեցին, երբ միսիոներները նրան քահանայության օրհնություն տվեցին: Նրանք սկսեցին կարդալ Մորմոնի Գիրքը նրա հետ:

Կղզու փոքր համայնքի որոշ մարդիկ դժգոհ էին, որ Լևաոն նոր կրոն ընդունելու մասին է մտածում: Նրանք ծիծաղում էին նրա գործադրած ջանքերի վրա և նսեմացնում նրան: Այնուամենայնիվ, նա հաստատակամ մնաց և շուտով մկրտվեց: Նրա ամուսինը՝ Տույը, և նրա երեք երեխաները շուտով հետևեցին նրան իր հավատքում և Լևաոն հետագայում ծառայեց իր ճյուղում որպես Սփոփող միության նախագահ: Ուրիշները՝ նրա նվիրվածության օրինակի ազդեցության տակ, անվանեցին նրան Օլոսեգայի Եկեղեցու սիրտը:

Հարավային Կորեա

«Ես այլևս երբեք իրապես ցուրտ չեմ զգա»:

Չոյ Դոնգ Սուլը երիցական սպասավոր էր, որը կարծում էր, որ իր պարտականությունն է պաշտպանել իր միաբանության անդամներին Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցուց: Այնուամենայնիվ, նա սկսեց հանդիպել միսիոներների հետ և հստակություն գտնել վարդապետության վերաբերյալ իրեն անհանգստացնող հարցեր շուրջ: Նա գիտեր, որ իր նոր համոզմունքները կպահանջեն կարիերայի փոփոխություն և վտանգի տակ կդնեն իր հարաբերությունները հոր հետ, որն այդ ժամանակ Կորեայի երիցական եկեղեցու նախագահն էր:

Դոնգ Սուլը նախընտրեց մկրտվել Հան գետում: «Ես ուզում էի, որ իմ մկրտությունը հնարավորինս շատ նմանվի Հիսուս Քրիստոսի մկրտությանը»,- բացատրեց նա: 1981 թվականի սեպտեմբերի 5-ի մառախլապատ առավոտյան Հան գետի ջուրը սառն էր, սակայն երբ Դոնգ Սուլը դուրս եկավ ջրից, նա նկարագրեց իր ներսից բխող ջերմությունը: «Այժմ ես պատկանում եմ Աստծո ճշմարիտ Եկեղեցուն»,- ասաց նա: «Ես այլևս երբեք իրապես ցուրտ չեմ զգա»: Երկու շաբաթ անց նրա կինը և երկու որդիները նույնպես մկրտվեցին, այս անգամ տաք հավաքատանը: Եկեղեցուն միանալը չհեշտացրեց Դոնգ Սուլի և նրա ընտանիքի կյանքը, սակայն այն հնարավորություն տվեց նոր օրհնությունների ստանալ: «իմ մկրտությունից հետո հալածանքներն ու տառապանքները նկարագրելը . . . իմ կարողությունից վեր է»,– ասաց Դոնգ Սուլը: «Մենք շատ բան կորցրինք [Եկեղեցուն միանալու] ընթացքում, սակայն մենք շահել ենք ավելին, քան երբևէ երազել ենք»:

Կոտ դ’Իվուար

«Կյանքի և երջանկության դռներ»

Լիդի Զեբո Բահին իր ընտանիքի վերջին երեխան էր, որն ապրում էր իր տանը, երբ երկու ծնողներն էլ մահացան: Այս կորուստը հանգեցրեց ծանր ընկճախտի: Նրա եղբորորդին՝ Ֆաետ Նադեջը, նրան ծանոթացրեց Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցուն:

Երբ Լիդին առաջին անգամ գնաց եկեղեցի, նա մեծ սեր զգաց Սփոփող միության և Երիտասարդ կանանց կազմակերպությունների քույրերի կողմից: Թեև նա դադարել էր կարդալ իր ընկճախտի ժամանակ, սակայն կարողացավ կրկին կենտրոնանալ՝ Մորմոնի Գիրքն ուսումնասիրելու համար: Նա մկրտվեց 1995 թ. նոյեմբերի 18-ին:

Իր մկրտությունից կարճ ժամանակ անց, նա հնարավորություն ստացավ վերադարձնելու այն սերը, որը ցուցաբերվել էր իր հանդեպ՝ ծառայելով Սփոփող միությունում և Երիտասարդ կանանց կազմակերպություններում: Նա նաև ծառայել է որպես ճյուղի միսիոներ՝ առաջարկելով մարդկանց գտնել այն ընկերակցությունն ու խաղաղությունը, որն ինքը վերջերս գտել էր: «Այս բոլոր կոչումներն ինձ զորացրին և օգնեցին առաջընթաց ունենալ՝ ինչպես հոգևոր, այնպես էլ մտավոր առումներով»,- ասաց Լիդին:

Լիդին դարձավ առաջին քույր միսիոներներից մեկը, որը ծառայեց Կոնգոյի Դեմոկրատական Հանրապետությունում՝ Կինշասայի միսիայում:

© 2024 by Intellectual Reserve, Inc. All rights reserved. PD80007812_201_474-1